

## ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 1898-1922 թթ Հարժիս գյուղում պարբերաբար, կախված երկրում տիրող իրավիճակից, գործել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սան հարժիսցի Հակոբ Վարժապետի մասնավոր վճարովի դպրոցը: Որպես դպրոցական շենք ծառայել է «Խաչունց դաբը»: Այնուհետև երեք տարի դպրոցականները հաճախել են քառամյա աշխատանքային դպրոց /աշակերտների թիվը 30 /:

Տարիներ անց փոխվել է կրթօջախի կարգավիճակը: Ուսումնական պարապմունքները բարելավելու նպատակով որպես դպրոցական շենք սկսեց ծառայել Կոստանդ Ղևոնդյանի երկհարկանի բնակարանը: Հիշատակման են արժանի այդ տարիներին դպրոցում մեծ ավանդ ներդրած ուսուցիչները՝ Հայկ և Արշալույս Քյուրքչյանները Երևանից, Նիկոլայ Մաթևոսյանը Տեղ գյուղից, Արմենակ Գրիգորյանը, Հարություն Սալուխյանը և այլոք:

1931թ. գյուղը Որոտանի կիրճից տեղափոխվեց նոր բնակատեղի, որտեղ ուսուցումը նախ կազմակերպվեց վրաններում, ապա կարճ ժամանակում կառուցված փայտե տանիքով դպրոցական շենքում:

1934թ. դպրոցը տարրականից վերածվեց յոթնամյայի: 1936թ. դպրոցում սովորում էր 280 աշակերտ՝ 12 դասարաններում / 23 շրջանավարտ /: Այդ տարիներին մեր դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է անվանի գրող Սերո Խանգաղյանը:

1954-55 ուստարում թույլատրվեց դպրոցում ունենալ 8-րդ դասարան, 1956-57 ուստարում դպրոցը ստացավ միջնակարգի կարգավիճակ և մինչ այսօր գործում է այդ կարգավիճակով: